


Երեկ հայտարարված էր «Գիտության բարձրաձայն-ման օր», եւ այդ առիթով ասուլիս էր ԳԱԱ-ում: Նոյն օրը էր հնչեցնել գիտության հետ կապված խնդիրները Հայաստանում՝ գիտության եւ գիտնականների հեղինակության անկում, գիտական գործունեության օժանդակության բացակայություն, գիտության ցածր ֆինանսավորում: Այդ ակցիան՝ որդես «Բարձրաձայնեց գիտության մասին» իրադարձություն, դրված է նաեւ Հայաստանի գիտական լրագրողների ֆեյսբուքյան խմբի էջում: Միջոցառումը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը**: Նա հերթական անգամ վկայակոչեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի նույն տվյալները՝ տարածաշրջանի 2002-2007 թթ. գիտության վիճակի մասին: ԳԱԱ նախագահը կրկին հիշեցրեց՝ Հայաստանում գիտության ոլորտում այսօր 4114 մարդ է ներգրավված, Ադրբեջանում՝ 11200, Վրաստանում՝ 8000, Ղազախստանում՝ 10700 եւ այլն: Խոսեց նաեւ ֆինանսավորման մասին: Հայաստանը գիտությանն այսօր հատկացնում է \$23 մլն, Ադրբեջանը՝ 117,987 մլն, Ղազախստանը՝ 384 մլն եւ այլն: Արդյունքներին եւ գիտական հրատարակումներին անդրադարձավ Ռ. Մարտիրոսյանն ասաց, թե 2008-ի տվյալներով Հայաստանի արդյունքը 544 միավոր է, Ադրբեջանը ունի 292 միավոր, Վրաստանը՝ 328, Ղազախստանը՝ 218, իսկ Իսրայելը՝ 10000-ից ավելի: Նաեւ հավելեց, թե

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄԻՑ՝ ՄԻՆՉԵՎ ԴԵՂԱՏՈՄԱ

Ինչո՞ւ է հրապարակում դարձնել ոլորտը եւ գումարներ ներգրավել



խոսակցություններն այն մասին, որ գիտությունը մեռնում է Հայաստանում, զալիս է անտեղյակությունից կամ էլ չարախոսություն է: Ռ. Մարտիրոսյանը նշում է, որ ընդամենը դժվարություններ կան՝ գիտական արդյունքները դանդաղ են անտեղյակացվում, տնտեսվարող սուբյեկտները չափազանց չեն, գիտական արդյունքները միջազգային շուկա հանելը եւ խնդիրների հետ է կապված: ԳԱԱ նախագահ

ամեն դեպքում գոհ է թիչ գումարով էլ առաջ ենք տարածաշրջանի երկրներից: Ասում է, որ ղեկավար է գիտության ոլորտը գրավիչ դարձնել երիտասարդների համար, ղեկավարները հարկ է մտածի նրանց սոցիալական վիճակի մասին, լրատվամիջոցներն էլ դրական բաներ գրեն: Սա՛ է նրա գիտության փրկության բանաձևը: Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ,

Հայաստանում գործող գիտական լրագրողների խմբի համակարգող **Արեգ Միքայելյանը** կոնկրետ առաջարկներով հանդես եկավ՝ գիտության ֆինանսավորման այլընտրանքային ձևերի եւ գիտության հեղինակության բարձրացման վերաբերյալ: Նա գտնում է, որ գիտական կառույցները ղեկավարում են գոնե ամիսը մեկ անգամ իրենց ձեռքբերումների ու արդյունքների մասին մամուլի հարցազրույցներով ուղարկեն ԶԼՄ-ներին, որ հետո չդժգոհեն, թե միայն ինտերյուների մասին է գրվում: Ա. Միքայելյանը փաստեց, որ հայաստանյան ոչ մի բուհում գիտական լրագրություն չի դասավանդվում, խոսեց գիտության հովանավորության մասին օրենքի բացակայությունից, որի գոյությունը գործարարներին կնդեր ներդրումներ անել ոլորտում: Նա նշեց, որ, օրինակ, հզոր բյուջե ունեցող ԱՄՆ-ում գիտության գումարների 1/3-ը գոյանում է հովանավորների միջոցներից:

Ա. Միքայելյանը ցավով նկատեց, որ Հայաստանում գիտնականն այսօր ասոցացվում է անաղակ խավի ներկայացուցիչների հետ եւ հարգանք չի վայելում, մինչդեռ նա շղեպ է փող խնդրել ինչ-որ մեկից, համադար

տասխան օրենքների դեպքում գործարարները հաճույքով միջոցներ կհատկացնեն գիտությանը: Ոչ մի նոր բան չասած ու անընդհատ իրեն կրկնող Ռ. Մարտիրոսյանից «Առավոտը» հետաքրքրվեց՝ ի՞նչ իմաստ ունի, որ Հայաստանում 4000-ից ավելի մարդ լինի գիտության ոլորտում, մանավանդ՝ շատերը չեն էլ զբաղվում գիտությամբ, մի՞թե բանակն է որակ տալիս: ԳԱԱ նախագահին հարցը դուր չէկավ, բանի որ ղառասխանեց, թե մեր հարցը շարունակելու դեպքում այսպես կարելի էր ձեռակերպել: «Իսկ մեր ինչի՞նչ է ղեկավար գիտությունը»: Նա նաեւ միայն տուրք է համարում հույսը միայն հովանավորների վրա դնելը: Ստացվում է՝ ամերիկացիները եւ շատ այլ զարգացած երկրներ ահավոր միամիտ են:

ԳՐԱՐ ՀԱՎՈՐՄԱՆ

Հ. Գ. Երեկ, երբ ԳԱԱ դահլիճում քննարկվում էին գիտության խնդիրները, ԳԱԱ բախում էլ բարեկարգման ու զեղեցկացման աշխատանքներ էին կատարվում: Փաստ է, որ Գիտությունների ակադեմիան իր այսօրվա կառուցվածքով եւ կերպով միայն բակը զեղեցկացնելով կամ զեղեցիկ ձեռակերպումներով գիտության վիճակը ներկայացնելով չի նշանակում գիտության զարգացումը: ԳԱԱ-ում հավաքված, ճանաչված ղառակների մեծամասնությունը վաղուց գիտությանը չի զբաղվում, ուղղակի հավելն է, իսկ գիտությունը հավելն է համար է: